№ 134 Օգոստոսի 2 (14) 1880 Օգոստոսի 2 (14) № 134

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ: Առանձին համարները 5 կոպէկով:

—

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

—

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

—

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

—

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մամուլի ազատութիւն.—Ներքին տեսութիւն. Մի խնդիր դէպի մեր հեղինակները. Նամակ Նուխուց. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Ղազախից. Նամակ Ջէբրայիլից. Նամակ Ղարսից.—Արտաքին տեսութիւն. «Голосъ» լրագրի թղթակցութիւնը հայերի մասին. Թիւրքիա. Անգլիա.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ռուսաց մամուլը, մանաւանդ «Вѣстникъ Европы» ամսագիրը և «Голосъ» լրագիրը, խօսելով ռուս մամուլին կատարեալ ազատութիւն տալու անհրաժեշտութեան վրա, յայտնում են այն միտքը, որ մամուլը Ռուսաստանում մինչև այժմ այն միակ հասարակական հիմնարկութիւնն էր, որ ընդհանուր պետական օրէնքների պաշտպանութիւնը չէր վայելում: Նա մի տեսակ անհարազատ երեխայ էր ռուսաց կեանքի մէջ:

Իւրաքանչիւր քաղաքացի, ամենամեծ յանցանք էլ գործելով, այն ժամանակ միայն կրում է իր պատիժը, երբ դատարանի քննութեան ենթարկվելուց յետոյ զրկվում է կամ մասամբ, կամ կատարելապէս իր քաղաքացիական իրաւունքներից: Քաղաքական յանցաւորն անգամ, հրէշաւոր չարագործը, ենթարկվում է միշտ կամ զինուորական կամ քաղաքական դատաստանին և յետոյ պատժվում է: Իսկ լրագրութիւնը այդ իրաւունքները չունի, նա պետական օրէնքներից դուրս է:

Մի կալուածատէր, մի սեփականատէր իր սեփականութենից զրկվելու համար, պէտք է մի նշանաւոր յանցանք գործած լինի, որի պատճառով նա ենթարկվում է դատարանի քննութեանը և դատարանի վճիռը միայն կարող է զրկել նրան սեփականութենից: Իսկ լրագրապետը, կարող է ամեն րոպէ զրկվել իր սեփականութենից, իր ձեռքով հիմնված և իր սեփականութիւնը համարվող լրագրից կամ ամսագրից, առանց դատարանի վճռին ենթարկվելու, միմիայն վարչական կարգադրութեամբ:

Լրագրապետը և ոչ մի բանում՝ իր հասարակական ոչ մի գործողութեան մէջ չէ վայելում իր միւս համաքաղաքացիներին, պետական միւս հաստատութիւններին հաւասար իրաւունքներ օրէնքների առջև:

Օրինակ մի աննշան յանցանքի համար լինում են տուգանքներ, որոնց ենթարկվում են ամեն քաղաքացիները, բայց ոչ մի քաղաքացի, ինչքան հարուստ էլ լինէր, երբէք չէ ենթարկվում, օրինակ, այնպիսի ահագին, աներևակայելի տուգանքների, ինչպէս մի լրագիր: Երևակայեցէք մի լրագիր, որ ունի 10,000 բաժանորդ, մեծ քանակութեամբ հատով է ծախվում ամեն օր, ունի մեծ արդիւնք յայտարարութիւններից, բայց ուրիշ կողմից ունի և օրական ահագին ծախսեր: Յանկարծ մի յօդուածի համար վարչութիւնը արգելում է այդ լրագրին երեք, չորս ամսով հատով ծախել, կամ յայտարարութիւններ ընդունելու իրաւունքից է զրկում նրան: Ահա լրագիրը երեք, չորս ամիսների ընթացքում վաթսուն հազար րուբլու կորուստ է կրում: Երբ է տեսնված, ասում է «Вѣстн. Европы» ամսագիրը, որ ռուսաց դատարաններից մինը ենթարկէր մի քաղաքացուն 60,000 րուբլ տուգանքի պատժին: Եւ այդ տեսակ պատժին լրագիրը կամ ամսագիրը կարող է ենթարկվել երկու, երեք անգամ տարվայ ընթացքում:

Ռուս լրագրութեան փափագը միայն այն է, որ մամուլը ենթարկված լինի նոյն օրէնքներին, որոնց ենթարկվում է ամեն քաղաքացի, այսինքն ամեն տեսակ փոքր թէ մեծ յանցանք գործելուց յետոյ նոյն դատարաններին ենթարկվի, որոնց ենթարկվում են Ռուսաստանի միւս քաղաքացիները:

Մինչև այժմ ռուսաց մամուլը պետական օրէնքների համար մի տեսակ խորթ որդի էր: Ռուսաց մամուլի փափագը այժմ շատ համեստ և իրաւացի է. նա ցանկանում է որ մամուլը բոլոր միւս քաղաքացիների հետ հաւասար իրաւունքներ վայելէր օրէնքի առջև, ենթարկվէր պրօկուրօրութեան նոյն պահանջների և դատաստանական նոյն քննութեանը, որոնց ենթարկվում են Ռուսաստանի բոլոր մնացած քաղաքացիները ընդհանուր պետական օրէնսդրութեան հիման վրա և ոչ թէ ինչպէս մինչև այժմ եղել է առանձնական ապօրինի դրութեան մէջ դրված լինէր, կառավարվելով մամուլի համար ստեղծված գրաքննական առանձին օրէնքների կանոնադրութեամբ և կախված լինելով միմիայն վարչութեան կամքից:

Այդ է բոլորը ինչ որ փափագում է լրագրութիւնը, ինչ որ փափագում ենք և մենք՝ հաւասարեցրած լինել մեր իրաւունքների մէջ, ռուսաց բոլոր միւս քաղաքացիների հետ, ընդհանուր պետական օրէնքի առջև:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԽՆԴԻՐ ԴԷՊԻ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

—

Որքան էլ թոյլ կողմեր ունենայ ներկայ հայ ուսանողութիւնը, այնուամենայնիւ անկարելի է ուրանալ այն հանգամանքը, որ նա իր նախորդ սերունդների հետ համեմատութեամբ մի հսկայական քայլ է փոխել դէպի առաջ, մի յառաջադիմական քայլ, որ ժամանակի ծնունդ է, որ հետզհետէ զարգացող կեանքի արդասիք է: Ռուսաստանի հայ ուսանողութեան մէջ զարթնած սէրը դէպի իր ազգութիւնը, նրա անուրանալի համակրութիւնը դէպի ազգային կեանքի պայծառ երևոյթները, Փրանսիական ուսանողութեան առաջին ինքնաճանաչութեան քայլը. նրա դարևոր թմրութիւնից սթափվիլը, գերմանական ուսանողութեան համախոհութիւնը նրանց հետ,—այդ բոլորը յառաջադիմութեան փառաւոր ապացոյցներ են:

Կոպիտ եսականութիւնը, առանձնական անտարբերութիւնը, ճշմարիտ է, դեռ ունեն իրանց պաշտողները, իրանց գերիները, բայց մի տասը տարի էլ ժամանակ,—և կեանքի հոսանքը կը սրբի խպառ այդ բիծը, կը մղի նրան դէպի անցեալը, դէպի պատմութեան շրջանը:

Ուսանողական կեանքի զարգացման նշաններից մէկը անշուշտ այն ուրախալի երևոյթն է, որ ուսանողութիւնը մի առանձին համակրութեամբ է վերաբերում դէպի ազգային գրականութիւնը, ձգտում է մինչև անգամ ներգործական դեր կատարելու նրա զարգացման և յառաջադիմութեան գործի մէջ: Գրականական ամեն մի նորութիւն՝ թէ լրագիր, թէ նոր ամսագիր, թէ նոր գրքեր, նոր հեղինակութիւններ մի անասելի ուրախութիւն են պատճառում ներկայ ուսանողին. նա պարզ տեսնում է, որ իր փոքրաթիւ ազգը շատ հեռու է կորչելուց, որ նա ընդհակառակը վերածնում է, կարելի է ասել, համարձակ քայլ է գալիս թէև կաղ ոտով համամարդկային քաղաքակրթութեան ընթացքի հետ: Հայ ուսանողը գալիս է այն համոզմանը, որ ոչ թէ միայն արժէ հետաքրքրվիլ հայ գրականութեամբ, այլ մինչև անգամ բարոյական յանցանք կը լինի կարողութեան չափ չը նպաստել նրա զարգացմանը: Նա ձգտում է կարդալ մայրենի հեղինակներին, տեղեկութիւններ ունենալ գրականական նորութիւններից, հետևել գրականութեան զանազան ճիւղերի յառաջադիմութեանը:

Բայց որքան էլ ջերմեռանդութեամբ նա ձգտի բաւականութիւն տալու իր ցանկութեանը, դժբաղդաբար նա անկարող է: Մոսկվայում, Պետերբուրգում, Փարիզում, Ստրասբուրգում ընկած աղքատ ուսանողը լսում է լրագիրներից որ դուրս է եկել այս կամ այն նոր գիրքը, նոր հեղինակութիւնը, նա ծարաւում է կարդալու, քննելու, գուցէ կրիտիկա գրելու, բայց անկարող է գտնում, որովհետև չունի այնքան նիւթական միջոց, որ կարողանայ ձեռք բերելու ամեն մի նոր գրվածք: Նա ճարահատեալ ստիպված է լինում սպասել և 4—5 տարուց յետոյ հայրենիք վերադառնալով կարդալ: Տխուր դրութիւն է այս, և այդ դրութիւնից է դուրս գալիս յօդուածիս նպատակը՝ իմ խնդիրը դէպի մեր հեղինակները: Ես դառնում եմ խոնարհաբար խնդրով դէպի այս վերջինները (ես լիազոր չեմ իմ ընկերներից, բայց ծիծաղելի կը լինէր ի հարկէ, եթէ նրանց վիրաւորէր այս խնդիրը)—ես խնդրում եմ, որ նրանք աչքի առաջ առնեն ուսանողութեան այդ անյարմար դրութիւնը և եթէ ցանկանում են աւելացնելու իրանց գրուածների հասկացող կարդացողների թիւը, չը խնայեն մի մի օրինակ իրանց գրքերից ուղարկել ձրիաբար այս կամ այն համալսարանական քաղաքը, ինչտեղ կան հայեր: Մեր լրագրութիւնը հասկացել է ուսանողների այդ դրութիւնը՝ «Մշակ», «Մեղու» և «Պսակ» ստացվում են գոնէ Մոսկվայում մի քանի օրինակ ձրիաբար—թող մեր պատուելի հեղինակներն էլ հետևեն այդ գեղեցիկ օրինակին: Ինչպէս Մոսկվայի ուսանող, ես ի հարկէ առանձնապէս կը խնդրեմ իմ այստեղի ընկերների համար: Գրքեր կարելի է ուղարկել ուղիղ համալսարան մի որ և է ուսանողի անունով՝ սա կը կարդայ և կը տայ ընկերներին: Ամեն մի ստացած գրքի համար շնորհակալութիւն կը յայտնվի լրագրում: Կը սպասենք…

Ս. Դադեանց

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

—

22 յուլիսի

Եթէ իւրաքանչիւր քաղաք մի բանում շնորք ունի, Նուխին, պէտք է ասած, այդ կողմից ամենից առատ է վարձատրված. Նուխին բազմակողմանի շնորքների կենտրոն է. Անգթութիւն, չարագործութիւն, աւազակութիւն, մարդասպանութիւն, սառնասրտութիւն, անտարբերութիւն, քաբարրտութիւն, ժամանակասպանութիւն, թղթախաղասիրութիւն.... վերջապէս ինչ տեսակ անպիտանութիւն ասես այստեղ կը ճարվի։ Եւ զարմանալին այն է, որ օրից օր յառաջադիմութեան տեղ յետադիմութեան մէջ է գլորվում Նուխին։—Ի՞նչ է ներկայացնում նրա առևտուրը—յետադիմութիւն, նրա բարոյականութիւնը—յետադիմութիւն, եկեղեցին, ուսումնարանը, քահանան, վաճառականը, պաշտօնակատարը.... բոլորը, բոլորը յետադիմութիւն։ Լաւ է այս զովասանքների տեղ ձեզ, յարգելի ընթերցող, փաստեր ներկայացնեմ։ Այս վերջին հինգ շաբաթվայ մէջ Նուխում կատարվում են այն ազնիւ քաջագործութիւնները, որոնց մասին անցեալ նամակումս խոստացայ գրելու, ահա և փաստերը։

Մի Թուրք երիտասարդ, կասկած տանելով իր երկու քոյրերի բարոյականութեան մասին, հինգ շաբաթ չէ որ սպանեց մէկ քրոջը, միւսին էլ հալածելիս, հարևանները աղաղակի վրա հաւաքվելով, ազատում են։ Չարագործին բանտարկեցին։

Մի հայ երիտասարդի իր տան բակում՝ գիշերը քնած ժամանակ գնտակի հարուածով սպանեցին։ Չարագործը մնաց անյայտ։

Մի հայ 16, 17 տարեկան տղայ՝ որ այս տարի էր աւարտել քաղաքային դպրոցում, քաղաքից դուրս հայոց գերեզմանատնում սպանվեցաւ իր հետ աւարտած իր հասակակից ընկերից, որի խնդիրքով գնացել էր նրա հետ մանգալու։ Սրան և մի ուրիշ երիտասարդի (որ չարագործի վկայութեամբ իրա սովրեցնողն է եղել) բանտարկեցին։

Պրիստաւի օգնականը իր երկու եասավուլներով գիշերը փողոցով գնալիս երեքն էլ գնտակի հարվածից ծանր վէրքեր ստանալով, հազիւ ազատվեցան սպանվելուց։ Հարուած պատճառողը չը յայտնվեցաւ։

Այս բոլորը քննիչներին քննութեան, իսկ նուխեցիներին խօսակցութեան՝ առատ նիւթ է տուել, ձեզ էլ, յարգելի ընթերցող, մի պատկեր տեսնելու, թէ որքան ապահով է կեանքը Նուխում, մի փաստ թէ որքան օր ըստ օր է ծաղկում է մեզանում եղբայրասիրութիւնը, գթասրտութիւնը, բարեգործութիւնը և յառաջադիմութիւնը։

Իսկ նայեցէք մեր բիրժայի պատուհանից այն կանաչ սեղանի չուրջը խմբված մոլորված բազմութեան վրա, այն բազմահոգ կերպարանքով խաղաթղթին յառած անքուն աչքերով մեր խնլօքներին, մեծ մասամբ չինովնիկներին, այն ժամանակ կը համոզվէք թէ մեր քաղաքի լուսաւորված իշխանները ինչքան թանգ են գնահատում իրանց ժամանակը, որքան թշնամի են ժամավաճառութեան, ժամանակասպանութեան և թղթախաղասիրութեան։ Միթէ սա յառաջադիմութիւն չէ։

Իսկ անտարբերութիւն և սառնասրտութիւն ասած բանը ճրագով չես գտնի Նուխում. եթէ հարցաքննութեան մօտ եօթանասուն մարդ հրաւիրվի՝ հազիւ հինգ հոգի կը գան, եթէ 80 հոգի ժողովի հրաւիրվի՝ երկու ջուխտ ներկայ կը գտնվեն։ Իրաւ միթէ նուխեցուն սառնասիրտ մեղք է ասելը։

Եթէ յօգուտ Վանայ սովատանջների ստորագրութեան թերթի մէջ չի ամաչի մեր հարուստը մի քանի կոպէկ գրվել, չի գթայ սովամահ պատանուն, նուաղած օրիորդին, լալագին մօր թախանձանքին—ինչպէս չասել նրան թէ դու քարասիրտ ես։ Միթէ քարասիրտ չես հարուստ նուխեցի։

Զօրս, հինգ բլիւզով փորից պատող նուխեցի, Աստուած գթաց քեզ. 14 ռուբլու ցորենը այժմ 4 ռուբլով ես առնում, իսկ դու իմանալով Վանեցի եղբօրդ մահը, իմանալով թէ նրա կեանքը քեզանից, քո կոպէկից է կախված՝ ինչ գութ ցոյց տուիր նրան։ «Մերկ էի, չոր չը տուիր հագնելու, քաղցած էի, հաց չը տուիր». յիշիր, այսպէս պէտք է ասէ քեզ մի օր քո գթած Աստուածը։ Միթէ դու չը լսեցիր որ մայրը կաթի տեղ իրան ցամաքած ծծի արիւնն է տալիս, միթէ դու զաւակի տէր չես...։ Հազար անգամ գնա ժամ, ծունր դիր, Աստուածասէր երևացիր, կասեմ աշխարհին որ այդ սուտ է, կասեմ որ դու քարասիրտ ես։

Զ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԴԻՑ

—

Յուլիսի 15

Նոր-Բայազէդի գաւառում տիրող թանգութիւնը հետզհետէ սկսեց մեղմանալ և հացի գինը իջաւ մինչև 80 ր.։ Գների այսպիսի ցածանալուն օգնեցին մի կողմից արքունի հացի բաժանումը, միւս կողմից դրացի գաւառներում հունձերի հասնելը, առանց դրանց մինչև մեր հացերի հնձվելը՝ գները չափազանց կը սաստկանային։ Մեր հունձը ևս մօտենում է. նրան այս տարի ոչինչ չէ սպառնացել, հերվայ վնասակար մկներից մի հատ անգամ չէ երևում, թէպէտ մի քանի օրվայ անձրևների պակասութիւնը՝ վրդովեց ժողովրդի տրամադրութիւնը, վախեցնելով նրան չորութիւնով, բայց այդպիսի դրութիւնը երկար չը տևեց, որովհետև անձրևները իրանց գալը այնքան չը յետաձգեցին։

Այստեղ նորերումս բացվեց արքունի գանձարան. դա իսկապէս մեծ թեթևութիւն է մեր գաւառի համար, նրա համար որ՝ տուրքերը առաջ Երևան էին գնում, պատճառելով ահագին ճանապարհային ծախսեր։ Բացվելու է նաև երկու դասատնից արքունի ուսումնարան, այժմեան պատրաստականի փոխարէն, որը գոյութիւն ունի յիսուն թւականներից, պատրաստելով երբեմնապէս կառավարութեան համար գրագիրներ։ Հոգևոր ուսումնարանը՝ շնորհիւ հոգաբարձութեան, յառաջադիմութիւն է ցոյց տալիս, մինչդեռ նրանից մի երկու տարի առաջ, ամենաանմխիթար դրութեան մէջ էր գտնվում թէ ուսման, և թէ դրամական կողմանէ։ Այս յուլիսի 10-ին վերջացաւ այդ ուսումնարանի հարցաքննութիւնը և ժողովուրդը գոհ մնաց նրանից։ Տեսուչը, ուսուցիչները և աշակերտները, եկեղեցական փառաւոր հանդիսից յետոյ, կարդացին ճառեր, և ամեն մինը իր կողմանէ ցոյց տուեց ուսման կարևորութիւնը։ Ուսուցիչներից մինը՝ իր ճառում խօսեց հասարակութեան կրթութեան վրա, բացատրելով նրա անհրաժեշտութիւնը և օգտաւէտութիւնը, և իբրև միջոց ցոյց տուեց և հրաւիրեց ունենալ՝ կեանքից վեր առած ներկայացումներ, ընթերցարան, գրադարան, երեկոներ և եթէ կարելի է, տալ դասախօսութիւններ, եթէ ոչ բոլորն 'ի միասին, ինչ մի անգամից անհնարին է և դժուար, գոնէ նրանից մինը։ Մեր քաղաքը այս կողմանէ շատ զուրկ է. Նրա բնակիչների մէջ, որոնք, ինչպէս յայտնի է, գաղթել են Տաճկաստանի Հին-Բայազէդից 1828—1830 թւականներին,—ամբողջ կէս դարի ընթացքում, յառաջադիմութեան գործը շատ թոյլ ոտքերով է առաջ գնացել, և նախապաշարմունքները դեռ մեծ մասամբ բռնում են իրանց տեղերը։ Կարելի է մեր ուսում առածներին յաջողվի այդ, որոց թւումը մենք ունեցել ենք երկու համալսարական, որոնք գործում են հասարակութիւնից դուրս, և մի հատ էլ արտասահմանում ուսանող։

Աւելի դժբաղդ են մեր գիւղերը. նրանք կորցրել են նահապետական կեանքը անգամ և վարում են մի ուրիշ այլանդակը, ընկղմված խոր տգիտութեան մէջ. Նրանցում ոչ մի տեղ ուսումնարան չը կայ, տեղ տեղ երեխաները դեռ շարունակում են տիրացուների մօտ Սաղմոս մրմնջալ. այս կարգից դուրս են Ալափարս և Սօլակ գիւղերը, որոնք ունեն փոքր 'ի շատէ կանոնաւորված ուսումնարան։ Ամեն մի գիւղական հասարակութիւն, ինչքան էլ նա դրամական նեղ միջոցի մէջ դրված լինի, կարող է մի ծխական ուսումնարան ունենալ. դրա համար չէ հարկաւոր ժողովրդի օգնութեան դիմել, այլ կարող է այն աղբիւրներից, որոնք ամեն տեղ կան, օգուտ քաղել և ծառայեցնել օգուտը ուսումնարանին։—Օրինակի համար Նորադուզ գիւղը կարող է խաչահամբուրի եկամտով պահել մի ուսումնարան։ Եկամուտն ուտում է և մի աման էլ ջուր վրէն խմում է մի մասնաւոր մարդ, որի տանը մէջ անգամ գտնվում են մասունքներ, որտեղ որ դիմում են բազմաթիւ ուխտաւորներ հասարակ օրերը անգամ։ Այսպէս թէ մի ուրիշ պէս, հարկաւոր է Սուրբ Նշանը (մասանց անունն է) տեղափոխել աւելի պատշաճաւոր տեղ՝ եկեղեցին, որտեղից նա վեր է առած, այն ժամանակ, երբ նորադուզցիք թողնում էին իրանց հայրենիքը—Քորուն և Մուսուն գիւղերը։

Մեզանում, ձեռնտու և արդիւնաբեր հողագործութիւնը կորցրել է իր նշանակութիւնը, առաջի տեղը բռնում է առևտրականութիւնը՝ որը միշտ ընկած դրութեան մէջ է եղել, նա մանաւանդ, այս տարի։ Առևտրականութեան ընդարձակվելուն արգելառիթ պատճառ է դառնում ճանապարհային ուրիշ քաղաքների հետ յարաբերութիւն չունենալը, պատճառ որ Նոր-Բայազէդը շինած է մի անկիւնում, արքունի ճանապարհից եռեսուն վերստ հեռաւորութեամբ դուրս։ Չը նայելով, որ հանգամանքներն առևտրական յաջողութեանը չեն օգնում, այնուամենայնիւ հարկաւորութիւնից դուրս կրպակներ կան. արհեստաւորները թողնում են արհեստը և ձեռք են զարկում հանգիստ ապրուստի—վաճառականութեան։ Այսպիսով մէկ մէկի խանգարում են, խլելով իրարից աշխատանքը և վերջաւորութիւնը այն է լինում, որ մի կարգին արհեստաւոր, նոյն ձևով հողագործ և առևտրական չէք գտնի։ Մի և նոյն ձգտումը, որը կայ դէպի առուտուրը, փակածի մէջ առած, տեսնվում է և գրագրութեան վերաբերմամբ. այս վերջինն էլ իր կողմանէ հրապուրիչ է և շատ հետևողներ ունի։

Հողագործութեան հետ համահաւասար օգտաւէտ է և անասնապահութիւնը բայց այդ պարապմունքն՝ այնքան ընդունված չէ, չը նայելով որ տեղական կլիմայական պայմանները՝ շատ և շատ նպաստաւոր են նրա ծաղկելուն։ Ամեն մի գերդաստան ունի միմիայն իր հարկաւոր եղածին չափ անասուններ, նոյն չափով էլ պատրաստում է իւղ, պանիր և այլն, չը կարողանալով աւելացնել և աւելին ծախել, իսկ երբ հասնում են նրա վրա դրամական նեղ միջոցները, նա անճարացած, կորում է, ինչպէս ասում են, իր ջերանիցը, և ծախում է, դատապարտելով իրան չոր և ցամաք նստելուն։ Դրացի գաւառացիները ընդհակառակն են վարվում, նրանք գարնան սկզբից մեծ խմբերով դիմում են Նոր Բայազէդը ընդարձակ արօտատեղերին և մեծ օգուտ են ստանում իւղ և պանիր պատրաստելով։

Թէ մեր գաւառը կարող է տալ մեծ հարստութիւն, դրանում կարծիք չը կայ. հողը արդիւնաբերում է՝ ցորեն, գարի, հաճար, տարեկան, պոզուկ, կտաւհատ, սորուկ, կանէփ, կարտոֆել, կաղամբ և ուրիշ շատ արմատիք, բայց հողագործը անտարբեր է և չէ ուզում օգտվել, պատճառներից մինն էլ սա էր, որ ժողովուրդն այս թանգութեան տարին սոված մնաց։

Ինձ մնաց մի երկու խօսք ևս ասել։ Ճանապարհային յարաբերութիւններից ի բաց, և հեռագրատան չունենալը մի կողմ դրած, ժողովուրդը զուրկ է բժշկական միջոցներից—չունի ոչ մի դեղատուն որտեղից որ կարելի լինի վերցնել դեղեր. հարկաւորվում է րեցեպտը Երևան վազեցնել, ոտքի տակ տալով միմիաւագ 92 վերստ, ուրեմն ինքն իրան հասկանալի է հիւանդի դրութիւնը՝ որը մինչև դեղերի ստացվելը, շատ անգամ պատահում է որ մեռնում է ոտքերը։ Հարուստն կարող է էլ աւելի հեռու տեղից, քան թէ Երևան բերել տալ, նա ունի կարողութիւն, իսկ աղքատն ինչ հաշուով։

Սրա հետ միասին ես աւելորդ չեմ համարում կցել մի դէպք՝ որը արժանի է ուշադրութեան։ Մեր քաղաքացիների մէկի ձեռքում ինձ պատահեց տեսնել ձուից նոր դուրս եկած հաւի ճուտ, որը ունէր երկու գլուխ, այդ երկու գլուխներն էլ ձայն էին հանում. գլուխները հաստատված էին մի պարանոցի վրա մէկ մէկի կպած, մնացեալ անդամները, թէ ներսից և թէ դրսից մէկ ճուտի էին։ Խեղճ հրէշը մի կէս ժամու չափ ճչալուց յետոյ սատկեց, շարժելով շատերի սնահաւատութիւնը, այս և այն գալու պատուհասների վրա։

Եղիկ

ՆԱՄԱԿ ՂԱԶԱԽԻՑ

—

22 յուլիսի

Կարծես թէ Ղազախը երբէք իր ստոր դրութիւնից վեր բարձրանալու չէ։ Այս գաւառի ժողովուրդը ամեն տեսակ զրկանք—թէ բարոյական և թէ նիւթական—պիտի քաշէ, վասն զի ճակատագրի իւրաքանչիւր վճիռը անարգել պիտի իրագործվի։ Թէև գաւառն այնքան էլ ընդարձակ չէ, սակայն այդ անառաջադէմ գաւառում այնքան մանր—մունր բաներ են կատարվում, որ մարդ մի առ մի գրել անգամ չէ կարողանում։

Դիլիջանում ուսուցիչը աշակերտներին երգեցողութիւն չէ սովորեցնում, ասելով «ձայն չունեմ, չեմ կարող ուսուցանել»։ Օրվայ մեծ մասը թուրքերի հետ քէֆ անելով է զբաղվում, քան թէ աշակերտաց հետ ուսումնարանում պարապում։ Սորա պէս և Քարվանսարայում առաջին և երկրորդ տարին աշակերտները կրօն սովորելու կարողութիւն չունեն։ Երևի մեր պատուելիները կամենում են աստուածաբանութիւն ու հոգեբանութիւն դասախօսել, բայց դժբաղդաբար աշակերտները դորան համապատասխան հասունութիւն չունեն։

Գողութիւնները իրանց կարգովը շարունակվում են. իշխ. Ճավճավաձէի հեռանալը այստեղի նահանգապետութեան պաշտօնից՝ գողերի համար ընդհանուր ազատութիւն եղաւ, վասն զի այժմ պէտք է անասունների տէրը իր կենդանիքը պահպանէ ամենայն զգուշութեամբ, եթէ ոչ հակառակ դէպքում դատարկ կը նստի իր կենդանիներից....Այժմ մի քանի ժառանգական գողեր դարձեալ իրանց ընտանեկան որսերն են սկսել, էլ փողով միս առնել չեն ուզում....

Ամենայն տեղ մօրեխով լցվել է։ Այս սովորական մօրեխներիցն է, որ ոչինչ զգալի վնաս չէր տալի։ Մօրեխների մեծութիւնը հաւասար է саранча անուանվածի երկուսին. Թևերը բաւական երկար են և թռչում են այնպէս ինչպէս ճնճղուկն է թռչում։ Այդ վնասակար միջատները մեծ քանակութեամբ դեռ չը հնձած արտի, լոբու, ծխախոտի վրա թափված ուտում են։

Քոխվաները փոխանակ խօսքով փայտով են ժողովրդի հետ գործ ունենում, փոխանակ վճիռներ կայացնելու՝ զօրեղի, աղի խօսքը տափը չեն գցում, ծառային և կամ ստորադրվողին ծեծում—փետ ու միս անում, ինչպէս ժողովուրդն է ասում։

Ոզունթալայի իջևանում մօտերքումս փոստ են յափշտակել, սակայն քանակութիւնը յայտնի չէ։

Ամսիս 5-ին Շամշադինու Թովուզ գիւղում մի պատուական հայ երիտասարդ են սպանել։ Սպանողը եղել է իր հօրեղբօր որդին։ Ասում են, որ չարագործը իր դժոխային գործը կատարել է գիշերով, անկողնում պառկած ժամանակ, դաշնակը սիրտը խրելով։ Նա միւս եղբօրն ևս սպանել է ցանկացել, սակայն սխալմամբ յիշեալին է սպանել։

Մի մարդ (Խաչթառակում), որ հազիւ երեսուն տարեկան լինի, ամուսնացած է մի այրիի վրա, որ 40—45 տարեկան է և այժմ որդի չէ ծնում։ Այժմ նախապաշարված երիտասարդը կնոջը տարաւ Մողնի. Ս. Մեսրոպի գերեզմանի վրա, որ որդի ծնի....

Հ. Մարկոսեան

ՆԱՄԱԿ ՋԻԲՐԱՅԻԼԻՑ

—

8 յունիսի

Անտարբեր չը մնալով մեր Հայաստանի սովալլուկ եղբարց նպաստ մատուցանելուն մէջ, պարտաւորութիւն համարեցինք գոնէ դուռը դիմել մեր Ջիբրայելու փոքր հասարակութեանը և ժողովեցինք այս փոքր գումարը, 25 ր. 20 կ., որը յղելով ստորագրողաց ցուցակի հետ, մեծայոյս ենք որ կը հասցնէք ըստ պատկանելոյն և տեղ կը տաք ձեր «Մշակ» թերթի մէջ նուիրատուաց անուններ. այս փողից 20 կոպէկ հանեցինք ծախսս։

Նաղեժդայ Վարդապետեանց 3 ր., Անուշկայ Դօլուխանեանց 1 ր., Գալէեայ Մ. Շախնազարեանց 1 ր., Ղումաշ Տէր-Ղազարեանց 1 ր., Խասայ Մ. Շախնազարեանց 1 ր., Կատինկա Ղազարբէկեանց 1 ր., Բակում խանում Ջվանշիր 5 ր., փարի խանում Նիւթալիբեկով 3 ր., Անիչկայ Անտօնեանց 1 ր. 20 կ., Աննայ Շահկալտեանց 1 ր., Марія Залатницкая 1 р., Մանասան Դաւթեանց 1 ր., Տէր-Յովհաննէս Տէր-Մինասեանց 1 ր., Մարգարիտ Օրբէլեանց 1 ր. 40 կ., Կատինկայ Դանէլեանց 1 ր., Սօֆիայ Ջառափով 20 կ., Մարգարիտ Ղարելով 20 կ., Նանասի Պետրոսեան 20 կ., Մաշոյ Օրբէլեանց 1 ր.։ Ընդամեն է 25 ր. 20 կոպէկ։

Օր. Մարիամ Օրբէլեանց, օր. Անուշկա Դօլուխանեանց։

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

—

10 յունիսի

Շատ անգամ կարդալով ձեր պատուական լրագրի մէջ Վանայ սովատանջ եղբարց կրած անտանելի նեղութիւնները, և նոցա համար եղած նուիրատուութիւնները Կարսի Ս. Լուսաւորչեան դպրոցի աշակերտներս պարտք համարեցինք յետ չը մնալ այդ սրբազան պարտականութիւնից և անհրաժեշտ գործից, և թէ նուիրատուութեամբ հաւաքած, և թէ նոյն դպրոցի աշակերտաց ունեցած ընկերութեան փողից երեսուն ռուբլի ուղարկում ենք ձեր մեծապատուութեան, և խնդրում ենք, որ բարեհաճէք ընդունել մեր այս չնչին նուէրը, և հասցնէք ուր հարկն է, իսկ նուիրատուաց անուններին ձեր պատուական թերթի մէջ մի անկիւն շնորհէք, ի քաջալերութիւն նոյն աշակերտաց որք են։ Միսաք Ղարագուլեանց 2 ր. 20 կ., Աղէքսանդր Խանամիրեանց 1 ր., Յովհաննէս Սաղաթէլեանց 1 ր., Վարդգէս Շահբազեանց 1 ր., Մկրտիչ Դօխիկեանց 1 ր., Զուրաբ Ապաճեանց 1 ր., Արսէն Զմկեանց 1 ր., Յարութիւնեան Գէորգ 1 ր., Ղազարեանց Մկրտիչ 60 կ., Յովհանջանեանց Յովսէփ 60 կ., Սարուխանեանց Մուշեղ 50 կ., Աստօյեանց Գէորգ 50 կ., Դօխիկեանց Համազասպ 40 կ., Տէր-Յովհաննէսեանց Մանուկ 40 կ., Եզեքուլեանց Սենեքերիմ 25 կ., Ղուկասեանց Սաղաթէլ 25 կ., Դուրկարեանց Յարութիւն 20 կ., Փալանճեանց Մարտիրոս 20 կ., Մելքոնեանց Բարսեղ 20 կ., Մատղաշեանց Պետրոս 20 կ., Վարդանեանց Արամ 20 կ., Ղլպուղեանց Կարապետ 20 կ., Մատինեանց Յովհաննէս 20 կ., Տէր-Խաչատրեանց Վարոս 20 կ., Մուրադեանց Մե-